ՌՈՒԲԵՆ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 16.06.1954
Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ռուբեն Լենդրուշի Ազիզբեկյանը** Երևանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1971-1976 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում :

Ռ. Ազիզբեկյանը 1976 թ. ընդունվել է աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ լաբորանտ :

1977-1979 թթ. որպես փորձնակ-հետազոտող գործուղվել է Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտ :

Մոսկվայից վերադառնալուց հետո նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող :

1981թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանը 1970-ական թվականներին :

Ռ. Ազիզբեկյանը 1985-1991 թթ. զբաղեցրել է ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, միաժամանակ հանդիսանալով նաև ատենախոսությունների պաշտպանության գծով մասնագիտական խորհրդի գիտքարտուղարը :

1991-1994 թթ. եղել է Պատմության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալը :

Ռ. Ազիզբեկյանը 1994 թ. հրավիրվել է ՀՀ ԱԳՆ՝ այդ համակարգում աշխատելով մինչև 2022 թվականը: 1996 թ. նրան շնորհվել է ՀՀ արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարարի բարձրագույն դիվանագիտական աստիճան : Ռ. Ազիզբեկյանը ԱԳՆ-ում աշխատելու տարիներին, որոշ ընդմիջումներով համատեղությամբ որպես ավագ գիտաշխատող աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Նա ավարտելով դիվանագիտական ծառայությունը, 2022 թ.հիմնական աշխատանքի է անցել Պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնում:

Ռ.Ազիզբեկյանը 1980-ականներին դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ 2007 թ. համատեղությամբ՝ դասախոսում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում: Քանիցս եղել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի նախագահ :

Ռ. Ազիզբեկյանը 2016 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում :

Ռ.Ազիզբեկյանի գիտական հետաքրքրության շրջանակներում են ՀՀ Երրորդ հանրապետության պատմության տարաբնույթ հիմնախնդիրները, հայ-ռուսական միջպետական

հարաբերություններին առնչվող հարցերը, ԼՂԻՄ-ի շուրջ տեղի ունեցած զարգացումները, հետխորհրդային տարածաշրջանի հակամարտության գոտիներում ծավալված գործընթացները և այլն :

Ռ.Ազիզբեկյանը հեղինակ է 4 մենագրության, ավելի քան 40 գիտական հոդվածի, որոնցից՝ մեկը ընդգրկված է **Scopus (Q1, 2024)** ՄԳՇ-ում, ևս մեկն էլ տպագրելու համար հանձնված է ՄԳՇ հանդիսացող ամսագրի: Հեղինակել է << Հայոց պատմություն >> բազմահատորյակի չորրորդ հատորի երկրորդ գրքի տասնչորսերորդ գլուխը որն ընդգրկում է 1985-1991 թվականները : Համահեղինակել է 2 կոլեկտիվ աշխատություն, 8 դպրոցական դասագիրք և ուսումնական ձեռնարկ :

Ռ.Ազիզբեկյանը գիտական զեկուցումներով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում, կլոր սեղաններում:

Ռ.Ազիզբեկյանը 1984 թ. գիտության բնագավառում արժանացել է Հայաստանի կոմերիտմիության մրցանակի դափնեկրի կոչման, պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի վաստակագրով:

Նա կուսակցական չէ, ամուսնացած է, ունի երկու դուստր և երկու թոռնիկ :